ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/57-4>>

ք. Երևան

«09» հուլիսի 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ռադիկ Շին>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Դավթյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան 21,23,25 շենքերի բակերի հիմնանորոգման աշխատանքները** *ծեռքբերման* (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտանհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365 օրացուցային օր**): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4.ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **32760000 (երեսուներկու միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար)** ՀՀ դրամ, **որից 5460000 (հինգ միլիոն չորս հարյուր վաթսուն հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ տաս տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը

միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..13 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Ռադիկ Շին» ՍՊԸ
Ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք.Երևան Հաղթանակ 14փ. Տուն 2
Կենտրոնական գանձապետարան	«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900052473429	Հ/Հ 220513330146000
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 01269471
Է. Կիրակոսյան ----------	Ա. Դավթյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	

Հավելված թիվ 1
«09» հուլիսի 2021 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/57-4>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
Сводная ведомость обема работ

Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան 21,23 և 25շենքի բակային տարածքի

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
1	E1-1593	3-րդ կարգի գրունտի քանդում էքսկավատորով բարձելով ա/ինքնաթափերի վրա	$մ^3$	74.5	2.400	178.800
2	C310-13	Ավելորդ գրունտի տեղափոխում 13կմ	տն	134.1	3.200	429.120
3	E27-36	Եզրաքարերի քանդում հիմքով	գմ	549	0.300	164.700
4	P25-4 գ-0.6 գ-0.7	Գոյություն ունեցող գրուցատաղավարի քանդում	տն	4	20.048	80.192
5	9-123 գ-0.6 գ-0.7	Գոյություն ունեցող նստարանների ապամոնտաժում	տն	0.6	20.000	12.000
6	E27-35	3սմ հաստ,մայթի ա/բետոնե ծածկույթի քանդում 879$մ^2$	$մ^2$	879	0.900	791.100
7	E27-31	12սմ հաստութ,մայթի խճի նախաշերտի քանդում 879$մ^2$	$մ^3$	105.48	0.300	31.644
8	P9-26	Մետաղական ցանկապատի քանդում	գմ	624	0.250	156.000
9	E46-99	Բետոնե հիմքերի քանդում	$մ^3$	14	2.060	28.840
10	.7-733 գ-0.6	Բազալտե աստիճանների քանդում պահպանելով հետագա օգտագործման համար	գմ	58.5	0.500	29.250
11	C310-13 տ.մ.կ.29	Շինաղբի բարձում և տեղափոխում 13կմ	տն	265.08	3.300	874.764
		Ընդամենը Итого				2776.410
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				10.17%
		Վերականգնման աշխատանքներ				
12	27-22	Խարամի շերտի փռում 15սմ հաստությամբ	$մ^3$	27	12.004	324.108
13	E1-1592	Բուսահողի մշակում էքսկավատորով բարձելով ա/ինքնաթափերի վրա	$մ^3$	367.5	0.900	330.750

14	C310-13	Բուսահողի տեղափոխում 13 կմ հեռավորությունից	տն	514.5	2.000	1029.000
15	E48-168	Բուսահողի փռում h-15սմ	մ²	2450	0.200	490.000
16	E48-214	Սիզամարգերի տեղադրում	մ²	2450	0.250	612.500
17	E23-1	Բետոնե սալիկների տակ ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում 5սմ հաստությամբ (540x0,05)մ³	մ³	27	5.000	135.000
18	E27-175	Բետոնե գեղարվեստական սալիկների տեղադրում	մ²	540	7.000	3780.000
19	27-79	80*200մմ բետոնե եզրաքարերի տեղադրում	գմ	480	4.830	2318.400
20	27-78	150*300մմ բետոնե եզրաքարերի տեղադրում	գմ	262	6.000	1572.000
21	27-173	Խճի շերտի վերականգնում h-12սմ հաստությամբ	մ²	544	0.800	435.200
22	27-169	Ասֆալտբետոնե ծածկույթի վերականգնում h-3սմ հաստությամբ	մ²	544	3.000	1632.000
23	11-6	Բնահողի տոփանում խճռով աստիճանների տակ	մ³	1.6	3.030	4.848
24	.6-14	Խամքարե բետոնե զանգվածի պատրաստում B 12.5 դասի բետոնից	մ³	1.07	45.000	48.150
25	.6-19	Միաձույլ ե/բ աստիճանների պատրաստում B15 դասի բետոնից	մ³	2.1	44.000	92.400
26	Շուկա	Ամրանի արժեքը 8A500C	տն	0.055	500.000	27.500
27	.7-733	Բազալտե աստիճանների վերատեղադրում /պահպանված/	գմ	58.5	6.000	351.000
28	E15-201	Գոյություն ունեցող հենապատերի ց/ավազե սվաղ	մ²	90	2.400	216.000
		Ընդամենը Итого				13398.856
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				49.08%
		Ջրավազան				
29	E11-55 E11-56 g-6	Գոյություն ունեցող ջրավազանի հատակի ց/ավազե հարթեցնող շերտի պատրաստում 50 մմ հաստությամբ	մ²	240	1.300	312.000
30	E15-201	Գոյություն ունեցող ջրավազանի պատերի ց/ավազե սվաղ	մ²	60	1.290	77.400
31	E15-521	Ջրավազանի պատերի և հատակի ներկում ջրակայուն ներկով	մ²	300	1.080	324.000
		Ընդամենը Итого				713.400
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				2.61%
		Մետաղական ցանկապատ խաղադաշտի				
32	E6- 20	B15 դասի բետոնից ժապավենային հիմքերի պատրաստում	մ³	12.000	50.000	600.000
33	E9-121	Մետաղական կանգնակների և անկյունային շրջանակների տեղադրում ներդիրներով	տն	2.037	113.100	230.385

34	տեղեկագիր	Մետաղական խողովակ d=76x3մմ	գմ	143.5	2.793	400.796
35	տեղեկագիր	Անկյունակ 50x5մմ	գմ	454.0	1.133	514.382
36	տեղեկագիր	Ներդիր դետալներ 40x2մմ	տն	0.055	500.000	27.500
37	տեղեկագիր	Ցանկապատի մետաղական ցանց	մ^2	240.0	0.500	120.000
38	E15-613	Մետաղական ցանկապատի երկշերտ յուղաներկում	մ^2	244.9	0.500	122.455
		Ընդամենը Итого				2015.517
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				7.38%
		Մետաղական ցանկապատ				
39	7-320	Մետաղական ցանկապատի տեղադրում ուղղանկյուն խողովակներից ներառյալ հողային և բետոնային աշխատանքները	գմ	205.8	2.875	591.675
40	Շուկա	խողովակի արժեքը 20*20*2մմ	գմ	1323	1.000	1323.000
41	Շուկա	խողովակի արժեքը Φ40*2մմ	գմ	162.8	0.600	97.680
42	Շուկա	B12.5 դասի Բետոնի արժեքը	մ^3	2.5	50.020	125.050
43	Շուկա	Խճի արժեքը	մ^3	2.1	10.000	21.000
44	Շուկա	Դեկորատիվ գլխադիրի արժեքը D=150մմ	հատ	148	1.452	214.896
45	33-82 գ-2	Մետաղական մասերի յուղաներկում 2 անգամ	տն	1.748	100.000	174.800
46	15-614	Մետաղական գլխադիրի յուղաներկում	մ^2	41.44	0.800	33.152
		Ընդամենը Итого				2581.253
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				9.46%
		Նստարան (21 հատ)				
47	11-6	Խճի նախաշերտ	մ^3	4.2	10.000	42.000
48	.6-2	Բետոնե հիմքերի կառուցում B15 բետոնից	մ^3	4.62	25.000	115.500
49	.6-86	Բետոնե շերտի ամրանավորում	տն	0.21	500.000	105.000
50	.9-123	Մետաղական նստարանների մոնտաժում	տն	1.474	60.000	88.440
51	շուկա	60x30x2.5մմ պողպատե խողովակների արժեքը	գմ	75.6	1.700	128.520
52	շուկա	50x30x2մմ պողպատե խողովակների արժեքը	գմ	522.9	1.200	627.480
53	շուկա	A500C 18մմ ամրանի արժեքը	կգ	33.6	0.400	13.440
54	15-614	Մետաղական նստարանների երկշերտ յուղաներկում	մ^2	93.45	0.300	28.035
		Ընդամենը Итого				1148.415
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				4.20%

		Զրուցատաղավար (3 հատ)				
55	1-961	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով հիմքերի տակ	մ^3	2.85	10.000	28.500
56	6-2	B15 դասի բետոնից կետային հիմքերի պատրաստում	մ^3	1.05	60.000	63.000
57	6-83	Ներդիր էլեմենտներ	տն	0.0240	500.000	12.000
58	C310-13 տ.մ.կ29	Ավելորդ գրունտի բարձում և տեղափոխում 13կմ	տն	3.3	3.000	9.900
59	9-94	(120*120) x3մմ քառակուսի խողովակներից կանգնակների մոնտաժում	տն	0.405	500.000	202.500
60	9-94	(120*120) x3մմ քառակուսի խողովակներից կանգնակների մոնտաժում (հեծանային մաս)	տն	0.555	500.000	277.500
61	9-94	(80x80) x2մմ քառակուսի խողովակներից ծպեղնատքերի կոնյոկի տեղադրում	տն	0.330	500.000	165.000
62	9-46	(30x30) x1.5մմ քառակուսի խողովակներից կավարամածի պատրաստում	տն	0.090	500.000	45.000
63	12-267	Ծածկույթի պատրաստում գունավոր պրոֆիլավոր ցինկապատ թիթեղից 0,55մմ հաստությամբ	մ^2	44	8.000	348.000
64	9-46	(30x30) x1.5մմ քառակուսի խողովակներից բազրիքաճաղերի պատրաստում	տն	0.210	500.000	105.000
65	15-614	Մետաղական մասերի յուղաներկում (այդ թվում սեղաններ և նստարաններ)	մ^2	165	0.500	82.500
66	9-123	Մետաղական սեղանների և նստարանների պատրաստում	տն	0.24	336.000	80.640
67	9-123	Մետաղական պահարանի պատրաստում	տն	0.27	300.000	81.000
68	23-1	Բետոնե սալիկների տակ ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում 5սմ հաստությամբ (33x0,05)մ^3	մ^3	1.65	10.000	16.500
69	27-175	Բետոնե գեղարվեստական սալիկների տեղադրում	մ^2	33	7.000	231.000
70	27-79	80*200մմ բետոնե եզրաքարերի տեղադրում	զմ	40.8	6.000	244.800
		Ընդամենը Итого				1992.840
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				7.30%
		Աղբաման				
71	շուկա	Աղբամանի տեղադրում	հատ	17	11.993	203.881
		Ընդամենը Итого				203.881
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				0.75%
		Ոռոգման ցանց				
		Հողային աշխատանքներ				
1	E1-961	Խրամուղու մշակում ձեռքով 3-րդ կարգի գրունտում կողլիցք	մ^3	1	2.000	2.000
2	C310-13	Ավելցուկային գրունտի բարձում և տեղափոխում 13կմ /0.25մ3/	տն	0.450	10.000	4.500

	տ.մ.կ.29					
3	E22-69	Ստորգետնյա պողպատե Φ200մմ տրամագծի ջրագծերի վնասված հատվածների վերականգնում	գմ	1	8.159	8.159
4	E1-968	Խրամուղու ետլիցք կողլիցքի մշակված գրունտներից,տոփանումով	$մ^3$	0.75	2.000	1.500
		Ընդամենը Итого				16.159
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				0.06%
		Տեխնոլոգիական աշխատանքներ				
5	E22-64	Պողպատե Dy57x3.5մմ էլ.եռակցվող խողովակների մոնտաժում փորձարկումով	գմ	200	3.679	735.800
6	E22-64	Պողպատե Dy40x3.5մմ էլ.եռակցվող խողովակների մոնտաժում փորձարկումով	գմ	131	2.500	327.500
7	E22-383	Պողպատե Dy50մմ սողնակի մոնտաժում	հատ	4	1.000	4.000
8	E22-383	Պողպատե Dy40մմ սողնակի մոնտաժում	հատ	3	0.800	2.400
9	E22-362	Dy40- Dy50մմ պողպատե ձևավոր մասերի մոնտաժում	տն	0.050	100.000	5.000
10	E22-429	Dy50 պողպատե կցաշուրթերի մոնտաժում	հատ	8	2.900	23.200
11	E22-429	Dy40 պողպատե կցաշուրթերի մոնտաժում	հատ	6	2.050	12.300
12	E22-401	Dy75 -Dy50մմ պողպատե խողովակների միացման տեղ	տեղ	5	4.022	20.110
13	E22-401	Dy75 -Dy40մմ պողպատե խողովակների միացման տեղ	տեղ	3	3.000	9.000
14	E15-614	Պողպատե խողովակների յուղաներկում 2 անգամ	$մ^2$	104	0.500	52.000
15	E15-647	Պողպատե խողովակների հակակոռոզիոն ներկում	$մ^2$	5	0.800	4.000
16	E33-82 գ-2	Պողպատե ձևավոր մասերի յուղաներկում 2 անգամ	տն	0.050	100.000	5.000
17	E22-335	Պողպատե խողովակների Dy40- Dy50 լվացում	գմ	331	0.050	16.550
		Ընդամենը Итого				1216.860
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				4.46%
		Ձրթող հանգույց (21հատ)				
18	E22-64	Պողպատե D=25x2.5մմ էլ.եռակցվող խողովակների մոնտաժում	գմ	4.2	2.000	8.400
19	12-811-1	Փականի տեղադրում DN25,N=1ՄՊԱ	հատ	21	2.200	46.200
20	E22-397	Պողպատե խողովակների միացման տեղ DN40-100x25	տեղ	21	4.252	89.292
		Ընդամենը Итого				143.892
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				0.53%

		Ցնցուղային հանգույց (35հատ)				
21	22-64	Պողպատե D=25x2.5մմ էլ.եռակցվող խողովակների մոնտաժում	գմ	7	2.224	15.568
22	12-811-1	Փականի տեղադրում DN25,N=1ՄՊԱ	հատ	35	2.100	73.500
23	22-397	Պողպատե խողովակների միացման տեղ DN40-100x25	տեղ	70	3.500	245.000
		Ընդամենը Итого				334.068
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				1.22%
		Դատարկման հանգույց (2հատ)				
24	22-64	Պողպատե D=25x2.5մմ էլ.եռակցվող խողովակների մոնտաժում	գմ	0.4	2.000	0.800
25	12-811-1	Փականի տեղադրում DN25,N=1ՄՊԱ	հատ	2	2.300	4.600
26	շուկա	Պողպատե անցում Dy40xDy25	հատ	2	1.953	3.906
		Ընդամենը Итого				9.306
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				0.03%
		Էլեկտրալուսավորություն				
1	E33-621	Հենասյուն (□108*4մմ, L=8մ)	հատ	3	120.000	360.000
2	8-363-1	Բարձակ միաձյուղ (□□□x2,8մմ, L=1,5մ)	հատ	7	3.500	24.500
3	8-471-1	Լայնակ (L50x50x5, L=0.6մ,m=2,3կգ) 4 ցցիկով	հատ	3	2.000	6.000
4	8-594-1	Լուսատու ЖКУ-250, ДРЛ-250լամպով	հատ	7	16.000	112.000
5	8-150-4	Մալուխ ալյումինե АВВГ 4x10մմ^2 հատվածքով /ճոպանով/	գմ	74	0.500	37.000
6	շուկա	Ճոպան □□մմ	գմ	70	0.200	14.000
7	շուկա	Ճոպան սեղմակ	հատ	85	0.200	17.000
8	8-52-1	Մեկուսիչ ТФ-20-01	հատ	12	0.500	6.000
9	8-52-1	Մեկուսիչ «ընկույզային»	հատ	6	1.000	6.000
10	E33-621	Մետաղական խողովակ (□□□□մմ, L=0.8մ)	հատ	3	6.000	18.000
11	8-692-1	Մալուխի ծայրերի չոր հարդարում	հատ	6	0.500	3.000
12	8-618-1	Լուսատուների լիցքավորում АПВ-2x2.5 հաղորդալարով	հատ	7	1.500	10.500
13	8-472-11	Լուսատուների զրոացում АПВ-2.5 հաղորդալարով	հատ	7	0.200	1.400
14	15-614	Հենասյուների յուղաներկում՝ 2 շերտ	մ^2	39	1.000	39.000
15	E6-5	Ե/բ հիմքերի պատրաստում B15 դասի բետոնից, հենասյուների համար	մ^3	1.2	50.000	60.000
16	շուկա	Ամրան	տ	0.036	500.000	18.000

17	E1-966	IV կարի գրունտի քանդում փոսորակներումում	մ³	1	10.1828	10.183
18	C310-13 տ. մ. կ. 29	Մշակված գրունտի բարձում եւ տեղափոխում 13կմ /0.8մ3/	տ	1.52	3.000	4.560
19	1-969	Ետլիքի իրականացում տեղի գրունտով	մ³	0.2	10.000	2.000
		Ընդամենը Итого				749.143
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				2.75%
		Ընդհանուրը Итого				100.00%
		Ընդամենը				27300.000
		ԱԱՀ, 20%				5460.000
		Ընդամենը				32760.000

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
Ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052473429
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«Ռադիկ Շին» ՍՊԸ
Ք.Երևան Հաղթանակ 14փ. Տուն 2
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220513330146000
ՀՎՀՀ 01269471

Ա. Դավթյան ----------
(ստորագրություն)

Հավելված թիվ 2
«09» հուլիսի 2021 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/57-4>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան 21,23,25 շենքերի բակերի հիմնանորոգման
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը **	
		Սկիզբը	Ավարտը
1	**Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան 21,23,25 շենքերի բակերի հիմնանորոգման** աշխատանքներ	Պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից	120 օրացուցային օր
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052473429
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«Ռադիկ Շին» ՍՊԸ
Ք.Երևան Հաղթանակ 14փ. Տուն 2
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220513330146000
ՀՎՀՀ 01269471

Ա. Դավթյան----------
(ստորագրություն)

Հավելված N 3
«09» հուլիսի 2021 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱԾՁԲ-21/57-4>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611300/57	**Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան 21,23,25 շենքերի բակերի հիմնանորոգման** աշխատանքներ	-	-	-	-	-	-	26 000 000	26 000 000	26 000 000	32 760 000	32 760 000	32 760 000	32 760 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ճոռոգական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
Ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900052473429
ՀԿՀՀ 02593108

Է. Կիրակոսյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող
«Ռադիկ Շին» ՍՊԸ
Ք.Երևան Հաղթանակ 14փ. Տուն 2
«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220513330146000
ՀԿՀՀ 01269471

Ա. Դավթյան ----------
(ստորագրություն)

Հավելված թիվ 4
«09» հուլիսի 2021 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱԾՁԲ-21/57-4>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«09» հուլիսի 2021 թ. կնքված
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/57-4>> գնման պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
_____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

07 հուլիսի 2021թ.
ք. Երևան

Թիվ 01-1008

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 20 51 40 464127/12

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/57» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/57-4» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 4.914.000 (չորս միլիոն ինը հարյուր տասնչորս հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015000046 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 19/11/2021թ.-ին հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 31 մարտի 2022թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/57-4» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա

ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման
գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան

Կատարող՝
Դավիթ Բարղության
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7091)

acba

07 հուլիսի 2021թ.
ք. Երևան

Թիվ 01-1009

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 20 51 40 464127/11

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՌԱԴԻԿ ՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք թիվ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/57-4» պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 3.276.000 (երեք միլիոն երկու հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015000046 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև 19/11/2022թ.-ին հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ, քան 31 մարտի 2023թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը՝ Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/57-4» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման
գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան

Կատարող՝
Դավիթ Բարղության
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7091)